



Բուժաշխատողների
իրավունքները և
պարտականությունները
բժշկական սպասարկում
իրականացնելիս



Բուժաշխատողների
իրավունքները և
պարտականությունները
բժշկական սպասարկում
իրականացնելիս

Երևան, 2024



Հարգելի՛ բուժաշխատող,

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի շահերի պաշտպանության ցանցի անդամների կողմից մշակված ձեռնարկը: Ձեռնարկի նպատակն է ներկայացնել բուժաշխատողների իրավունքները և պարտականությունները բժշկական սպասարկումն իրականացնելիս, ինչպես նաև բարձրացնել տեղեկատվության մակարդակը սեռական բռնության ենթարկված անձանց, հաշմանդամություն ունեցող կանանց, ՄԻԱՎ-ով ապրող կանանց, ԼԲՏ կանանց և եզդի կանանց առանձնահատկությունների վերաբերյալ վերարտադրողական առողջության ծառայություններ մատուցելիս: Հոդվածների մշակմամբ զբաղվել են առողջապահության ոլորտի իրավաբաններ, ինչպես նաև տարբեր խմբերի կանանց հետ աշխատող հոգեբաններ և իրավապաշտպաններ:

Ձեռնարկը պատրաստվել է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի շահերի պաշտպանության ցանցի անդամների կողմից:

Ձեռնարկում ներկայացված են նաև անհրաժեշտ հասարակական կազմակերպությունների և վերջիններիս գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև մի շարք թեժ գիծ ծառայությունների տվյալներ, որոնք կարող են օգնել Ձեզ՝ Ձեր աշխատանքային գործունեության ընթացքում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4

Աշխատանքային իրավահարաբերություններ

9

Բուժաշխատողների իրավունքները և պարտականությունները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս

Վիոլետա Չոփուսյան

14

Բժշկական աջակցության չափորոշիչները սեռական բռնության ենթարկված անձանց վերարտադրողական առողջության ծառայություններ մատուցելիս

Աննա Հովհաննիսյան

16

Բժշկական աջակցության չափորոշիչները հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության ծառայություններ մատուցելիս

Գայանե Գրիգորյան

19

Բժշկական աջակցության չափորոշիչները ՄԻԱՎ-ով ապրող կանանց վերարտադրողական առողջության ծառայություններ մատուցելիս

Ժենյա Մայիլյան

22

Բժշկական աջակցության չափորոշիչները ԼԲՏ կանանց վերարտադրողական առողջության ծառայություններ մատուցելիս

Լիլիթ Ավետիսյան

26

Բժշկական աջակցության չափորոշիչները եզդիական համայնքի կանանց վերարտադրողական առողջության ծառայություններ մատուցելիս

Անուշ Պողոսյան



Բժշկական օգնության և սպասարկման ողջ գործընթացում կարևոր սուբյեկտ է համարվում բուժաշխատողը, որը մի կողմից հանդես է գալիս գործատուի հետ իրավահարաբերություններում որպես աշխատող և մյուս կողմից՝ որպես բժիշկ մասնագետ պացիենտին բժշկական ծառայություններ մատուցելիս: Ցավոք իրազեկման ցածր մակարդակի պատճառով վերոնշյալ իրավահարաբերություններում հաճախ խախտվում են բուժաշխատողների իրավունքները: Սույն հատվածում համակողմանիորեն անդրադառնում ենք բժշկի կարգավիճակին, վերջինիս իրավունքների և պարտականությունների ամբողջական համակարգին՝ ներկայացնելով օրենսդրական կարգավորումների մատչելի ձևակերպումները:

● Աշխատանքային պայմանագիր

Ի՞նչ բովանդակությամբ պետք է լինի Ձեր աշխատանքային պայմանագիրը, աշխատանքի ընդունման անհատական իրավական ակտը (իրաման):

- անհատական իրավական ակտն ընդունելու, աշխատանքային պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը,
- աշխատողի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ նաև հայրանունը,
- կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձ գործատուի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ նաև հայրանունը,
- կառուցվածքային ստորաբաժանումը (դրա առկայության դեպքում),
- աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը,
- պաշտոնի անվանումը և (կամ) աշխատանքային գործառույթները,
- հիմնական աշխատավարձի չափը և (կամ) այն որոշելու ձևը,
- աշխատողներին սահմանված կարգով տրվող հավելումները, հավելավճարները, լրավճարները և այլն,

- անհատական իրավական ակտի կամ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը (անհրաժեշտության դեպքում),
- փորձաշրջան սահմանելու դեպքում՝ փորձաշրջանի տևողությունը և պայմանները,
- աշխատաժամանակի ռեժիմը՝ աշխատաժամանակի նորմալ տևողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ կամ աշխատաժամանակի կրճատ տևողություն կամ աշխատաժամանակի գումարային հաշվարկ,
- ամենամյա արձակուրդի տեսակը (սվազագույն, լրացուցիչ, երկարացված) և տևողությունը,
- իրավական ակտը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը,
- աշխատանքային հարաբերությունների հետ կապված՝ գործատուի և աշխատողի կողմից միմյանց ծանուցելու եղանակները,
- պայմանագրի կողմերի համաձայնությամբ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում կամ գրավոր աշխատանքային պայմանագրում կարող են ներառվել նաև այլ պայմաններ:

● **ԻՆչպես է կնքվում աշխատանքային պայմանագիրը**

Գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ բնօրինակը գործատուն հանձնում է աշխատողին: Հարկ է հիշել, որ բուժաշխատողն աշխատանքային պայմանագրի իր բնօրինակը պետք է պահի իր մոտ, ոչ թե գործատուի կադրերի բաժնում (ինչպես շատ տեղերում ընդունված է): Անհրաժեշտ է նաև հիշել, որ աշխատանքային պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով՝ բացառությամբ ստորև նշված դեպքերի:

Այսպիսով՝ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքվում, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի բնույթը կամ կատարման պայմանները, եթե սույն օրենսգրքով կամ օրենքներով այլ բան նախատեսված չէ: Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել որոշակի ժամանակահատվածով կամ օրացուցային ժամկետի սահմանումով կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտման սահմանումով:

Որոշակի ժամկետով պայմանագրեր կնքվում են նաև՝

1. ընտրովի պաշտոններում աշխատողների հետ՝ ընտրված ժամանակահատվածով.

1.1) օրենքով սահմանված ժամկետով նշանակված աշխատողների հետ

2. սեզոնային աշխատանքներ կատարողների հետ.

3. ժամանակավոր (մինչև երկու ամիս ժամկետով) աշխատանքներ կատարողների հետ.

4. ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող աշխատողի հետ.

5. օտարերկրացիների հետ՝ աշխատանքի թույլտվության կամ կա-
ցության իրավունքի վավերականության ժամկետով.

● **Ի՞նչ առանձնահատուկ կարգավորումներ կան
բուժաշխատողների աշխատանքային իրավունքների
վերաբերյալ**

Հաշվի առնելով առողջապահական ոլորտի առանձնահատկությունները՝ ի լրումն ՀՀ աշխատանքային օրենսգրքի աշխատանքային իրավա-
հարաբերությունների որոշ հարցեր կարգավորվում է ՀՀ կառավարության
01.02.2007 թ.-ի «Առողջապահական, հոգաբարձության (խնամակալու-
յան), մանկական դաստիարակչական, Էներգամատակարարման, գազա-
մատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ
առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշ-
խատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու
մասին» թիվ 201-Ն որոշմամբ:

Բուժաշխատողներին հատկացվում է երկարացված ամենամյա արձա-
կուրդ՝ ըստ ՀՀ կառավարության 11.08.2005 թ.-ի «Ամենամյա երկարացված
արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների
ցանկը հաստատելու մասին» թիվ 1599-Ն որոշման:

● **Ինչպե՞ս կարող եք պաշտպանել Ձեր աշխատանքային
իրավունքները**

ՀՀ-ում գործող օրենսդրական կարգավորումներն ու առկա վերահսկո-
ղության համակարգերի համաձայն՝ Դուք կարող եք դիմել հետևյալ մար-
միներին՝

- Առողջապահական և աշխատանքային տեսչական մարմին
- Առողջապահական և աշխատանքային տեսչական մարմինն իր

կանոնադրական գործառույթների շրջանակներում (ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշում) իրականացնում է աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն:

- Աշխատատեղում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության պահպանման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների, այդ թվում՝ աշխատանքի անվտանգության կոլեկտիվ և անհատական պաշտպանիչ միջոցների առկայության, պահպանման և շահագործման նկատմամբ:
- Մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա խնամող աշխատողների համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման նկատմամբ:
- Միաժամանակ, 2019 թ. դեկտեմբերի 4-ին Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխություններով նախատեսված է, որ 2021 թ. հուլիսի 1-ից իրականացվելու է աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողություն:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառելու, (այդ թվում՝ գրավոր չձևակերպելու կամ նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու կարգավորումների), ինչպես նաև վարձու աշխատողների աշխատավարձերի նկատմամբ որպես եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի վերահսկողությունն իրականացնում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի, թիվ 702-Լ որոշման հավելվածի 12-րդ կետի 3-6-րդ, 16-րդ, 22-րդ ենթակետեր):

Դատական համակարգ

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի և 265-րդ հոդվածի 1-ին մասի՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունը իրականացնում է դատարանը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան:

- Աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-և 2-րդ մասերի համաձայն՝ Աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների համար հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը 3 տարի է:

- Իսկ աշխատողի պատվի և արժանապատվության պաշտպանության, աշխատավարձի, ինչպես նաև աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջներով հայցային վաղեմություն չի կիրառվում:
- Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով, ինչպես նաև խեղման կամ առողջության այլ վնասման, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով հայցվորները դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են (պետական տուրքի մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի ա) և գ) կետեր):

Արհեստակցական միություն

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունը իրականացնում են աշխատողների ներկայացուցիչները (իրականացվում է արհեստակցական միությունների, աշխատողների ժողովի/համաժողովի կողմից ընտրված ներկայացուցիչների (մարմնի) կողմից):

Արբիտրաժային տրիբունալ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 264-րդ հոդվածի 3-րդ մասին՝ աշխատանքային վեճերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան կարող են հանձնվել արբիտրաժային տրիբունայի լուծմանը, եթե աշխատողի և գործատուի միջև կնքվել է համաձայնություն կամ կոլեկտիվ պայմանագրով նախատեսված է վեճն արբիտրաժին հանձնելու հնարավորություն:

Հարգելի՛ բուժաշխատողներ, մինչև աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողության համակարգի ներդրումը հորդորում ենք Ձեր խախտված աշխատանքային իրավունքները պաշտպանել վերը նշված պետական մարմինների և/կամ դատական ու արտադատական մարմինների միջոցով: Մինչ այդ կարելի է ըմբռնումով մոտենալ ստեղծված իրավիճակին, քանի որ 2013 թ.-ին Աշխատանքային տեսչության վերակազմակերպումից հետո աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողության համակարգի վերականգնման աշխատանքները, արդեն 2019 թ.-ից Աշխատանքային օրենսգրքի համապատասխան փոփոխությունների արդյունքում հաջող ընթացք են ստացել, և ընդամենը 1 տարի հետո ՀՀ-ում կրկին կներդրվի աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողության համակարգ:

ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՄՏԱՆԱԼԻՍ



● **Բուժաշխատողների իրավունքներ**

- Ըստ կրթության մակարդակի և առողջապահության բնագավառում իրականացվող գործունեության՝ բուժաշխատողները բաժանվում են ավագ, միջին, կրտսեր խմբերի: Ավագ և միջին բուժաշխատողները իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով իրենց կրթությանը, որակավորմանը և մասնագիտացմանը համապատասխան, իրենց իրավասության շրջանակներում իրականացնելու առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն, իսկ կրտսեր բուժաշխատողները՝ իրենց իրավասության շրջանակներում ոչ մասնագիտական՝ օժանդակող գործունեություն,
- ապահովագրելու իրենց գործունեության հետ կապված քաղաքացիական պատասխանատվության ռիսկը,
- ելնելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքի իրավիճակից՝ կայացնելու ապացուցողական բժշկությամբ հիմնավորված որոշումներ՝ լրացուցիչ միջամտություններ կատարելու համար, որոնք նախատեսված չեն համապատասխան կլինիկական ուղեցույցներով,
- օրենքով սահմանված կարգով մասնակցելու շարունակական մասնագիտական զարգացման գործընթացին,
- օրենքով սահմանված կարգով պաշտպանելու իրենց մասնագիտական համբավը, պատիվը և արժանապատվությունը,
- իրենց կրթությանը համապատասխան՝ ՀՀ-ում բժշկական գործունեություն ծավալելու վերաբերյալ լիազոր մարմնից պահանջելու և ստանալու տեղեկանք պատշաճ մասնագիտական գործունեություն իրականացնելու թույլտվություն ունենալու մասին (certificate of good standing),
- օրենքով սահմանված կարգով ստեղծելու միավորումներ կամ անդամակցելու դրանց,
- օգտվելու օրենքով սահմանված այլ իրավունքներից:



● **Բուժաշխատողներին ներկայացվող պահանջները**

- Առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության, բժշկական և ոչ բժշկական մասնագիտությունների, ինչպես նաև նեղ մասնագիտությունների ցանկերը հաստատում է լիազոր մարմինը:
- Այլ պետություններում բժշկական կրթություն ստացած անձինք (ներառյալ՝ ՀՀ քաղաքացիները և ՀՀ-ում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները) ՀՀ-ում բժշկական մասնագիտական գործունեություն կարող են իրականացնել ՀՀ միջազգային պայմանագրերի հիման վրա բժշկական կրթության փաստը հավաստող փաստաթղթերի փոխադարձ ճանաչման կամ օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական կրթության փաստը հավաստող փաստաթղթերի ճանաչման և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մասնագիտական գործունեության և ՇՄՁ հավաստագրերի առկայության դեպքում՝ բացառությամբ օտարերկրացի բուժաշխատողների մասնագիտական կարճաժամկետ գործունեության:
- ՀՀ-ում գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ հրավերով օտարերկրացի բուժաշխատողների մասնագիտական կարճաժամկետ գործունեության թույլտվությունը Կառավարության սահմանած կարգով տրամադրում է լիազոր մարմինը: Ըստ օրենքի՝ օտարերկրացի բուժաշխատողի մասնագիտական կարճաժամկետ գործունեություն է համարվում մուտքի վիզայով կամ առանց մուտքի վիզայի ՀՀ-ում օրացուցային մինչև 180 օր գտնվելու ընթացքում բժշկական մասնագիտական գործունեության իրականացումը:

● **Բուժաշխատողների պարտավորությունները**

- առողջապահության բնագավառում գործունեություն իրականացնելիս առաջնորդվել պացիենտի շահերով,
- յուրաքանչյուր պացիենտի ցուցաբերել շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն.
- հոգատար, անխտրական և հարգալից վերաբերմունք ցուցաբերել պացիենտի նկատմամբ,
- պացիենտին և (կամ) նրա օրինական ներկայացուցչին կամ կոնտակտային անձին տեղյակ պահել առողջական վիճակի, հիվանդության ախտորոշման, տրամադրված (տրամադրվող) բժշկական օգնության և սպասարկման, այդ թվում՝ բուժման մեթոդների

կիրառման ընթացքի և արդյունքների, ինչպես նաև դրանց հետ կապված ռիսկերի վերաբերյալ՝ բացառությամբ պացիենտի գրավոր հրաժարման և օրենքով սահմանված այլ դեպքերի,

- բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնելիս կիրառել ՀՀ-ում գրանցված դեղեր՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
- ավագ և միջին բուժաշխատողները պարտավոր են օրենսդրությամբ սահմանված կարգով լրացնել, վարել և շրջանառել բժշկական փաստաթղթերը այդ թվում Էլեկտրոնային առողջապահության համակարգում,
- պահպանել բժշկական գաղտնիքը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
- կատարելագործել իրենց մասնագիտական գիտելիքները և հիմնությունները, մասնագիտական որակավորման պահանջներին համապատասխան մասնակցել շարունակական մասնագիտական զարգացման գործընթացին,
- իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնել լիազոր մարմնի հաստատած մասնագիտական բնութագրին համապատասխան,
- կատարել պացիենտի՝ վարման գործելակարգերով և ընթացակարգերով սահմանված պահանջները՝ օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում,
- պահպանել բուժաշխատողի մասնագիտական Էթիկայի կանոնները,
- կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:
- Բուժաշխատողները օրենքով նախատեսված դեպքերում պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Պատասխանատվություն

Քաղաքացիական

Քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցվում է Քաղաքացիական օրենսգրքի 1077-1087 հոդվածներով նախատեսված կանոններով, եթե պատասխանատվության ավելի բարձր չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:



Վարչական

ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի համաձայն՝ պատասխանատվության են ենթակա հետևյալ արարքները (զանցանքները)՝

- բժշկական պատշաճ կրթություն չունեցող և սահմանված կարգով բժշկական գործունեության չթույլատրված անձի կողմից որպես արհեստ բժշկությամբ զբաղվելը,
- բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրի առկայության դեպքում դրա իրավունքն ունեցող անձից բուժսպասարկման համար վճարներ գանձելը կամ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրումը մերժելը,
- բժշկական փորձաքննության իրականացման կարգը խախտելը,
- ՀՀ կառավարության սահմանած՝ կամավոր բժշկական ամլացում կատարելու կարգը կամ պայմանները խախտելը,
- դեղերի շրջանառության ոլորտի պահանջները խախտելը,
- մասնական սննդի և հարակից ապրանքների շրջանառության կանոնները խախտելը,
- բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատում (աբորտ) կատարելուց առաջ և հետո օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցառումներ չիրականացնելը,
- օրենքով թույլատրված դեպքերում հղիության արհեստական ընդհատում (աբորտ) իրականացնելիս օրենքով նախատեսված պարտադիր փաստաթղթերը չստանալը:

Քրեական

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ պատասխանատվության են ենթակա հետևյալ արարքները (հանցանքները)՝

- բժշկական գաղտնիք պարունակող տվյալը, օրենքով նախատեսված անձնական տվյալներ մշակողի կողմից առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության, ապօրինաբար մեկ այլ անձի հայտնելը,
- բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե նրանց անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով բուժվող հիվանդի առողջությանն

անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս,

- հիվանդին առանց հարգելի պատճառի օգնություն ցույց չտալն այն անձի կողմից, որը պարտավոր էր դա ցույց տալ, եթե հիվանդի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս,
- համապատասխան բժշկական բարձրագույն կրթություն ունեցող անձի կողմից ապօրինի աբորտ կատարելը,
- մարդու օրգանների (և) կամ հյուսվածքների ապօրինի շրջանառությունը,
- անձին, առանց իր ազատ կամարտահայտության և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնության, բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը,
- մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, Եթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, որը վնաս է պատճառել մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին,
- եվգենիկական փորձերը՝ մարդու լավասերմանը (սելեկցիային) ուղղված ցանկացած գործողություն կատարելը,
- մարդու վերարտադրողական կլոնավորումը՝ մահացած կամ կենդանի մարդու՝ արհեստական ճանապարհով գենետիկորեն նմանատիպն ստեղծելուն ուղղված ցանկացած գործողություն կատարելը:



ԲԺՇԿԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԵՌԱԿԱՆ
ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ
ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՏՈՒՑԵԼԻՍ



Որպես բուժաշխատող Դուք կարևոր դերակատարում ունեք սեռական բռնության ենթարկված անձի առողջության պահպանման և աջակցության տեսանկյունից:

Եթե Ձեզ դիմել է սեռական բռնության ենթարկված անձ, շատ կարևոր է, որ.

- ընդունեք պացիենտին մեկուսի սենյակում, որտեղ ձեզանից բացի ոչ մեկ չի լինի: Եթե պացիենտին ուղեկցում է աջակցող անձ կամ մասնագետ, կարևոր է, որ ճշտեք պացիենտից, թե արդյո՞ք վերջինս ցանկանում է, որ այդ անձը մասնակցի խորհրդատվությանը:
- Փորձեք համբերատար լսել ողջ պատմությունը, մի՛ ընդհատեք պացիենտին, մի՛ տվեք հետաքրքրությունից բխող և մեղադրական հարցեր, ինչպես օրինակ՝ ի՞նչ էիր հագել այդ օրը, ի՞նչ գործ ունեիր նրա հետ այդ ժամին:
- Երբ անձն ավարտի պատմությունը, փորձեք հասկանալ, թե ինչ գանգատով է Ձեզ դիմում:

Պացիենտի գանգատի վերաբերյալ համապատասխան բժշկական միջամտություն իրականացնելուց բացի՝ շատ կարևոր է, որ իրազեկեք վերջինիս՝

- սեռավարակների ստուգման հետազոտության մասին, այդ թվում՝ բռնաբարության բերանային (օրալ), կամ հետանցքային (անալ) ձևերի դեպքում,
- Նշեք, որ ՄԻԱՎ-ի ստուգման համար իրենք կարող են հետազոտություն իրականացնել 3 ամիս անց, քանի որ գոյություն ունի գաղտնի շրջան,

- հրատապ հակաբեղմնավորիչների մասին, որոնք անցանկալի սեռական ակտից հետո 72 ժամվա ընթացքում կանխում են անցանկալի հղիությունը,
- ստուգեք հղիության առկայությունը,
- ՄԻԱՎ-ի կանխարգելման հետկոնտակտային եղանակի մասին, որը կարող են օգտագործել չպաշտպանված սեռական ակտից 72 ժամվա ընթացքում,
- Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի մասին, որն անվճար սոցիալ-հոգեբանական և իրավաբանական ծառայություններ է մատուցում սեռական բռնության ենթարկված չափահասներին և անչափահասներին: Կազմակերպության հեռախոսահամարն է՝ **077 991280**:

Կարևոր է նաև իրազեկել պացիենտին, որ վերջինս կարող է դիմել ոստիկանություն, որն էլ կգբաղվի հանցագործության բացահայտմամբ: Կարևոր է իրազեկել պացիենտին, որ

- մարմնի կապտուկները, սեռական օրգանների շրջանում առկա վնասվածքները, հեշտոցում առկա սերմնահեղուկը մնում են միջինում 72 ժամ, և եթե պացիենտը ցանկանում է դիմել ոստիկանություն, ապա ցանկալի է, որ դա անի 72 ժամվա ընթացքում,
- ապացույցների հավաքման համար կարևոր է, որ պացիենտն այս ընթացքում չլողանա, որպեսզի կարևոր ապացույցները չկորչեն,
- չայրի կամ չթափի բռնաբարության օրը կրած հագուստը և կոշիկները:

Անչափահասի դեպքում սեռական բռնության կասկածների դեպքում անգամ կարևոր է հայտնել դրա մասին իրավապահ մարմիններին:

Ցանկացած իրավիճակում կարող եք զանգահարել Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն հետևյալ հեռախոսահամարով՝ 077 99 12 80 և ստանալ մասնագիտական խորհրդատվություն:

ԲԺՇԿԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆԱՆՑ
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՏՈՒՑԵԼԻՍ



Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Էլեկտրոնային տեղեկատվական բազայի տվյալների՝ 2022թ. հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված հաշմանդամություն ունեցող կանանց թիվը հասնում է 920760-ի, որոնք բախվում են բազմաթիվ խոչընդոտների և կրկնակի խտրականության՝ սեռով և հաշմանդամությամբ պայմանավորված և շատ հաճախ չեն կարողանում իրացնել իրենց վերարտադրողական առողջության իրավունքը:

Հաշմանդամություն ունեցող կանայք ունենում են տարբեր խնդիրներ. հենաշարժողական խնդիրներ ունեցող կանայք (օգտագործում են անվասայլակ, հենակ, ձեռնափայտ և այլն), լսողության խնդիրներ ունեցող/խուլ կանայք, տեսողության խնդիրներ ունեցող/կույր կանայք, խոսելու դժվարություն ունեցող կանայք, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կանայք, մտավոր խնդիրներ ունեցող կանայք և այլն:

Հաշմանդամություն ունեցող կանայք վերարտադրողական առողջապահական ծառայություններից օգտվելիս բախվում են մի շարք խոչընդոտների՝

- միջավայրային (առողջապահական ծառայություն մատուցող հաստատությունում թեքահարթակի բացակայություն, անմատչելի առողջապահական կահավորանք, անմատչելի սարքավորումներ և այլն),
- տեղեկատվական (այլընտրանքային ձևաչափով ինֆորմացիայի բացակայություն, օրինակ՝ տեղեկատվական նյութերը չեն տրամադրվում բրայլյան գրերով, աուդիո կամ խոշորացված տառաչափով կույր կամ տեսողության խնդիրներ ունեցող անձանց, հեշտ ընթերցվող տարբերակով՝ մտավոր և զարգացման խնդիրներ ունեցող անձանց, կամ տեղեկատվական նյութերը փակցված են բարձրության այնպիսի մակարդակի վրա, որ անվասայլակով տեղաշարժվող կինը դժվարանում է կարդալ),
- հաղորդակցային (օրինակ՝ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հեռախոսազանգերի փոխարեն տեքստային հաղորդագրությունների համակարգի և ժեստերի լեզվի թարգմանչի բացակայություն),

- վերաբերմունքային (հաշմանդամություն ունեցող կանանց տարբեր խմբերին սպասարկելու և նրանց հետ շփվելու էթիկայի ոչ լիարժեք պատրաստվածություն, հաշմանդամություն ունեցող կնոջ վերարտադրողական առողջության խնդիրների վերաբերյալ բուժաշխատողների բացասական կամ սխալ ընկալումներ ու կարծրատիպեր):

Վերարտադրողական առողջության, պտղաբերության հետ կապված որոշակի ծառայություններից օգտվելու միակ այլընտրանքը մասնավոր առողջապահական հաստատություններն են, որը շատ հաճախ ֆինանսապես անհասանելի է հաշմանդամություն ունեցող կանանց համար, քանի որ նրանց մեծ մասի եկամտի միակ աղբյուրը հաշմանդամության թոշակն է:

● **Ի՞նչ հարցեր չի կարելի ուղղել հաշմանդամություն ունեցող կանանց՝**

- Մենա՞կ եք եկել, ընտանիքի անդամներից կամ ընկերներից որևէ մեկը չի՞ եկել Ձեզ հետ:
- Հասկանո՞ւմ եք, կիի՞շե՞ք ինչ եմ ասում: Ուրիշ մեկը չի՞ եկել Ձեզ հետ, որ նրան ասեմ:
- Ձեր հաշմանդամությունը չի՞ խանգարել, կամ իսկապե՞ս Դուք ապրում եք սեռական կյանքով:
- Ձեզ կարելի՞ է մայրանալ, չե՞ որ Դուք հաշմանդամություն ունեք: Դա կարող է բացասաբար ազդել Ձեր հաշմանդամության վրա: Վստա՞հ եք:
- Դուք ամուսնացա՞ծ եք, թե՞ անօրինական կապի մեջ եք Ձեր գուգընկերոջ հետ:
- Ձեր հաշմանդամությամբ կկարողանա՞ք հոգ տանել և մեծացնել Ձեր ապագա երեխային: Լա՞վ եք մտածել: Միգուցե ազատվե՞ք երեխայից:

● **Ի՞նչ հարցեր հաշվի առնել**

- Համբերատար և ուշադիր լսեք Ձեր այցելուին, խրախուսեք նրան, որ իրեն մտահոգող հարցերն ուղղի Ձեզ: Հարգեք նրա կարծիքը:
- Եթե այցելուն խոսելու հետ դժվարություն ունեցող կին է, և Դուք չեք հասկանում նրան, մի՛ շրջանցեք հարցը, այլ խնդրեք, որ նա կրկնի այն:
- Հարցեր ուղղեք և առողջությանը վերաբերող քննարկումներ ունեցեք ուղիղ հաշմանդամություն ունեցող այցելուի հետ, այլ ոչ թե նրա ուղեկցողի:



- Եթե պացիենտը լսողության խնդիր ունի, աշխատեք խոսել՝ ուղիղ նայելով նրա դեմքին, քանի որ լսողության խնդիրներ ունեցող անձինք մեծամասամբ կարդում են շուրթերից: Իսկ եթե հիվանդը դժվարանում է հասկանալ, կարող եք հաղորդակցվել՝ գրելով թղթի վրա:
- Մտավոր և զարգացման խնդիրներ ունեցող կանանց հետ հաղորդակցվեք՝ օգտագործելով ավելի հեշտ հասկացվող բառապաշար: Հարկ եղած դեպքում կրկնեք հարցերը՝ օգտագործելով այլ բառեր, կամ տեղեկատվություն տրամադրելու այլ եղանակ գտեք:
- Եթե այցելուն տեսողության խնդիր ունի, ցանկացած զննում կամ միջամտություն իրականացնելուց առաջ բացատրեք, թե ինչ եք անելու, և ինչ կարող է զգալ կինը:
- Հենաշարժողական խնդիրներ ունեցող կինը կարող է դժվարանալ զննման նստարանին բարձրանալ: Հարցրեք, եթե օգնության կարիք ունի, համապատասխան օգնություն ցուցաբերեք:
- Ֆիզիկական խնդիրներ ունեցող կանանց որոշ խմբերի համար հանվելը դժվար է: Ուստի հարցրեք, եթե օգնության կարիք ունեն, համապատասխան օգնություն տրամադրեք:
- Գինեկոլոգիական զննման ժամանակ հենաշարժողական խնդիրներ ունեցող, մանկական ուղեղային կաթված ունեցող կանայք (կծկված մկաններով) չեն կարող ինքնուրույն տեղաշարժել ոտքերը: Ուստի պատրաստ եղեք համապատասխան այլընտրանքային օգնություն տրամադրել:

Անհրաժեշտ թեժ գիծ ծառայություն

«Ազաթ» ՀԿ, 077 043042



ԲԺՇԿԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ԿԱՆԱՆՑ
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՏՈՒՑԵԼԻՍ



ՄԻԱՎ-ով կարող է վարակվել ցանկացած անձ՝ անկախ իր սոցիալական-տնտեսական վիճակից, կրոնական պատկանելությունից, սեռական կողմնորոշումից, մաշկի գույնից, մասնագիտությունից և այլ հատկանիշներից:

ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող խմբեր են համարվում ոչ մշտական, մեկից ավելի զուգընկերներ ունեցող կանայք, մշտական զուգընկերոջ ՄԻԱՎ կարգավիճակը չիմացող կանայք (առավել խոցելի են աշխատանքային միգրանտների և ներարկային թմրամիջոցներ գործածող անձանց զուգընկերները/կանայք), թմրամիջոցների ներարկային օգտագործող կանայք: ՄԻԱՎ-ով վարակված լինելու մասին չի կարելի ենթադրել կամ գուշակել արտաքին տեսքից, արտաքինով պայմանավորված որևէ հատկանիշից:

Վերարտադրողական առողջապահական ծառայություններից օգտվելիս ՄԻԱՎ-ով ապրող կանայք հաճախ հանդիպում են տարբեր խոչընդոտների, ինչպիսիք են բժշկական ծառայությունների մերժումը, բժշկական գործիքների ձեռքբերման համար հավելյալ միջոցներ պահանջելը, առանձին հիվանդասենյակի համար հավելավճարներ պահանջելը, խտրականացնող հարցեր ուղղելը, տարբերակված վերաբերմունք ցուցաբերելը, պտղից ազատվելու հորդորները և այլ դրսևորումներ:

Եթե Ձեզ դիմել է ՄԻԱՎ-ով ապրող հղի կին, ապա շատ կարևոր է, որ.

- Ընդունեք պացիենտին մեկուսի պայմաններում, որտեղ Ձեզանից բացի ոչ ոք չի լինի: Եթե պացիենտին ուղեկցում է աջակցող անձ կամ մասնագետ, կարևոր է, որ ճշտեք պացիենտից, թե արդյո՞ք վերջինս ցանկանում է, որ այդ անձը մասնակցի խորհրդատվությանը:
- Եթե հետազոտության արդյունքում Ձեր պացիենտի մոտ հայտնաբերվել է ՄԻԱՎ վարակ, փորձեք առանձին պայմաններում, բավարար ժամանակ տրամադրելով, իրականացնել խորհրդատվություն և ուղղորդել ինֆեկցիոն Հիվանդությունների Ազգային Կենտրոն (Ավան, Աճառյան 2) ախտորոշումը հաստատելու համար:

- Առանց իր գիտության և թույտվության մի՛ պատմեք կնոջ ՄԻԱՎ կարգավիճակի մասին Նրա հարազատներին (այդ թվում սկեսուրին, մորը, ուղեկցող այլ անձի): Նաև զգույշ եղեք, որ բժշկական անձնակազմից, որոնք առնչություն չունեն/որն է միջամտություն չեն իրականացնելու կնոջ հետ, չտեղեկանան Նրա կարգավիճակի մասին:
- Իր բժշկական թերթիկի (Էպիկրիզ, ամբուլատոր քարտ և այլ բժշկական թաստաթղթեր) վրա մի՛ գրեք ՄԻԱՎ կամ ՁԻԱՀ ախտորոշումը, կարող եք օգտագործել ՄԻԱՎ վարակի համար սահմանված հատուկ կոդը, որը նշված կլինի բժշկական թերթիկի ներսում և հասանելի կլինի միայն բժշկական անձնակազմին
- Մի՛ փորձեք կնոջը հորդորել կատարել հղիության արհեստական ընդհատում, քանի որ ՄԻԱՎ-ով ապրող կինը կարող է և իրավունք ունի մայրանալ, առողջ երեխա ունենալ: Ավելին. տրամադրեք համապատասխան տեղեկատվություն, որ մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման բոլոր միջոցառումները ձեռնարկելու պայմաններում նա կարող է առողջ երեխա ունենալ:
- Մի չօգտագործեք այնպիսի խտրականացնող տերմիններ, ինչպիսիք են ՍՊԻԴ-ով հիվանդ, տառապող և այլն, օգտագործեք «ՄԻԱՎ-ով ապրող մարդ» կամ «ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակ ունեցող մարդ» տերմինները:
- Կնոջը պետք է իրեն հասկանալի տերմիններով/բառապաշարով բացատրել ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները և ճշտել՝ արդյո՞ք հնարավոր է, որ նա վարակը փոխանցած լինի այլ մարդու: Նման դիսկի պարագայում անհրաժեշտ է կնոջ հետ իրականացնել բավարար իրազեկման աշխատանք, աջակցել Նրան, որպեսզի նա խոսի իր զուգընկերոջ/ամուսնու հետ և ուղղորդի հետազոտման::
- Բացատրե՛ք ՀԴՎ (հակառետրովիրուսային դեղամիջոցներ) դեղորայքի կանոնավոր ընդունման կարևորությունը, կողմնակի ազդեցությունները և դրանց կառավարումը:
- Ներկայացրե՛ք՝ ինչ է իրենից ներկայացնում ՄԻԱՎ-ի հետկոնտակտային և նախակոնտակտային կանխարգելումը և տեղեկացրեք, որ այն հասանելի է Ինֆեկցիոն Հիվանդությունների Ազգային Կենտրոնում
- Կարևոր է, որ միասին քննարկեք հղիության և ծննդաբերության ողջ ընթացքի մանրամասները և պատասխանեք կնոջը հուզող բոլոր հարցերին:
- Ցանկացած դեղորայք նշանակելիս համագործակցեք ԻՀԱԿ-ի այն բժշկի հետ, որը հանդիսանում է Ձեր այցելուի ընտանեկան բժիշկը,

քանի որ կան դեղամիջոցներ, որոնք հակացուցում ունեն ՀՌՎ դեղամիջոցների և ՄԻԱՎ-ի հետ:

- Տեղեկացրեք, որ գոյություն ունի ՄԻԱՎ-ով ապրող անձանց խնամքով և իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություն՝ «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՀԿ, հեռ.՝ 098 66 33 83:
- ՄԻԱՎ-ով ապրող կանայք կրկնակի խոցելի են ընտանեկան բռնության նկատմամբ: Հնարավոր է, որ ընտանիքի անդամներից որևէ մեկը կամ մի քանիսը խոչընդոտում են, որ կինը ստանա ՀՌՎ դեղամիջոցները կամ այցելի բուժհաստատություն՝ պարբերական հետազոտություններ անցնելու նպատակով: Փորձեք խորհրդատվության ժամանակ ճշտել՝ արդյո՞ք ամեն բան կարգին է, և նա առանց ընդհատման ստանում է ՀՌՎ դեղամիջոցները: Նմանատիպ խնդիրներ արձանագրելուն պես կնոջը փոխանցեք աջակցություն տրամադրող կառույցների կոնտակտները և/կամ կապ հաստատեք համապատասխան կառույցների հետ (ԻԱԻՄ կազմակերպություն, Ինֆեկցիոն Հիվանդությունների Ազգային Կենտրոն , ոստիկանություն):

Անհրաժեշտ թեժ գիծ ծառայություններ՝

Ինֆեկցիոն Հիվանդությունների
Ազգային Կենտրոն
թեժ գիծ՝ 010 61 08 20

«Իրական Աշխարհ,
Իրական Մարդիկ» ՀԿ,
թեժ գիծ՝ 098 66 33 83



ԲԺՇԿԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԼԵՍԲԻ,
ԲԻՍԵՔՍՈՒԱԼ (ԼԲ) ԿԱՆԱՆՑ
ԵՎ ՏՐԱՆՍ (Տ) ՄԱՐԴԿԱՆՑ
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՏՈՒՑԵԼԻՍ



ԼԲ կանայք. սեռական կողմնորոշումը զգացմունքային, հուզական, ինտիմ, սեռական գրավչությունների ամբողջությունն է ուղղված դեպի այլ անհատը: Մարդկանց մի մասն այդ գրավչություններն ունի այլ սեռի կամ գենդերի՝ նկատմամբ (օրինակ՝ կին-տղամարդ), մյուս մասը՝ նույնի նկատմամբ (օրինակ՝ կին-կին), իսկ մեկ այլ մասը՝ մեկից ավելի սեռի կամ գենդերի նկատմամբ (օրինակ՝ կին-կին և կին-տղամարդ): Մասնագիտական գործունեության ընթացքում Ձեզ կարող եմ դիմել տարբեր սեռական կողմնորոշում ունեցող կանայք՝ և՛ տարասեռական, և՛ նույնասեռական, և՛ երկսեռական:

Նույնասեռական կանանց այլ կերպ անվանում եմ լեսբի: Լեսբին զգացմունքային, հուզական, ինտիմ, սեռական գրավչություններ ունի կանանց նկատմամբ: Սովորաբար լեսբի կանայք դրսևորում են նույնասեռ վարքագիծ՝ ներառյալ սեռական հարաբերությունները կանանց հետ: Բիսեքսուալ կանայք վերոնշյալ գրավչությունների ամբողջությունն ունենում են մեկից ավել՝ կանանց, տղամարդկանց կամ այլ սեռի/գենդերի մարդկանց նկատմամբ: Սովորաբար բիսեքսուալ կանայք դրսևորում են նույնասեռ կամ տարասեռ վարքագիծ՝ ներառյալ սեռական հարաբերությունները, որը կախված է զուգընկերոջ սեռից/գենդերից: Լինել բիսեքսուալ կին չի նշանակում, որ կինը անպայման միաժամանակ ունի հարաբերություն տարբեր սեռերի/գենդերների մարդկանց հետ. պարզապես կյանքի ընթացքում մարդիկ ունենում են և/կամ կարող են ունենալ հարաբերություններ և՛ կանանց հետ, և՛ տղամարդկանց հետ, և՛ այլ գենդեր ունեցող մարդկանց հետ:

Տրանս (Տ) (կարող է կիրառվել նաև տրանսգենդեր եզրը) մարդիկ. գենդերային ինքնությունը կին, տղամարդ կամ այլ գենդեր՝ տրանս լինելու ներքին հոգեբանական ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել (իզական սեռի կանայք, արական սեռի տղամարդիկ) կամ չհամապատասխանել (արական կամ իզական սեռի տրանսգենդեր մարդիկ) ծննդյան ժամանակ նշված սեռի հետ ասոցացվող գենդերին: Մարդիկ սովորաբար իրենց գենդերային ինքնությունն արտահայտում են

ներքին հոգեբանական ընկալմանն ու զգացողությանը համապատասխան: Օրինակ՝ թե ինչպես է անհատը նախընտրում հագնվել, խոսել կամ ընդհանուր առմամբ դրսևորել իրեն սոցիալական միջավայրում: Գենդերի մեր ընկալումները սովորաբար սահմանվում են սոցիալապես կառուցված առևանգան-կանացի երկբևեռությամբ: Այն, թե ինչպես է անհատն արտահայտում իր գենդերը, միշտ չէ, որ կարող է ցուցանիշ լինել իր գենդերային ինքնության. դրանք կարող են տարբերվել:

Տրանս մարդն իր գենդերի ներքին ընկալմամբ (գենդերային ինքնություն) և արտահայտմամբ տարբերվում է ծննդյան ժամանակ նշված սեռի հետ ասոցացվող գենդերից: Օրինակ՝ մարդը կարող է լինել իգական սեռի, սակայն իր ներքին ընկալմամբ իրեն զգալ տղամարդ և իր բոլոր դրսևորումները համապատասխանեցնել տղամարդու դրսևորմանը տվյալ մշակությամբ:

Գոյություն ունեն նաև տրանս մարդիկ, որոնք անհարմարություն ունեն իրենց մարմնի և սեռային հատկանիշների հետ կապված (նախկին մասնագիտական եզրը՝ «տրանսսեքսուալ», որը դուրս է գալիս կիրառելիությունից) և ցանկություն ունեն կամ անցնում են սեռի փոփոխության գործընթացներ՝ ուղղված սեփական մարմինը համապատասխանեցնելու իրենց զգացածին՝ անցնելով հորմոնային թերապիա, սեռի փոփոխության վիրահատություններ և այլն: Գոյություն ունեն նաև մարդիկ, որոնք նույնականանում են որպես ոչ բիսար մարդ: Ոչ բիսար եզրույթն օգտագործվում է բնորոշելու այն մարդկանց, որոնց գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը պայմանական արական և իգական կատեգորիաների սահմաններից դուրս է: Նրանք կարող են իրենց գենդերը սահմանել որպես տղամարդու և կնոջ միջինացված գենդեր, կամ կարող են այն սահմանել այս եզրույթներից լիովին տարբերվող կերպով: Այս եզրույթը հոմանիշ չէ տրանս եզրույթին և պետք է օգտագործվի միայն այն դեպքում, եթե որևէ մեկն իրեն նույնականացնում է որպես ոչ բիսար անձ:

Հետևաբար մասնագետին կարող են դիմել տարբեր ինքնընկալումներով և տարբեր գործընթացներում գտնվող մարդիկ, որոնցից որոշ մարդիկ.

- կարող են լինել իգական սեռի և ցանկություն չունենալ անցնել որևէ սեռի փոփոխության գործընթաց (իգական սեռի այլ գենդեր կամ տղամարդ գենդերային ինքնություն ունեցող մարդիկ),
- կարող են լինել իգական սեռի և ցանկություն ունենալ անցնել սեռի փոփոխության գործընթաց, սակայն դեռևս չեն սկսել,
- կարող են լինել իգական սեռի մարդիկ, որոնք սեռի փոփոխության գործընթացում են,
- կարող են ծնված լինել արական սեռի և անցած լինել սեռի փոփոխություն՝ իրենց մարմինը և սեռական օրգանների փոփոխություն դեպի իգական մարմնի:

Եթե Ձեզ դիմել է ԼԲ կին կամ տրանսգենդեր մարդ, ապա կարևոր է հիշել, որ.

- Պետք չէ նույնացնել ԼԲ կանանց և տրանս և ոչ բինար մարդկանց ու իրենց առանձնահատկությունները: Նույնասեռական ու երկսեռական կանանց դեպքում խոսքը գնում է գրավչությունների ամբողջության մասին, իսկ տրանս և ոչ բինար մարդկանց դեպքում սեփական գենդերի ներքին հոգեբանական ընկալման ու արտահայտման: Տրանս և ոչ բինար մարդիկ կարող են ունենալ տարբեր սեռական կողմնորոշումներ: Կարևոր է պացիենտից հարցնել իր սեռական կողմնորոշումը և գուզընկերոջ սեռը/գենդերը, եթե այդ տեղեկության կարիքը կա:
- ԼԲ կանանց դեպքում կարող են լինել մարդիկ, որոնք նույնասեռ հարաբերությունների փորձ ունեցել են կամ ունեն ներառյալ սեռական ակտը, սակայն չեն նույնականանում որպես լեսբի կամ երկսեռական կին: Միևնույն ժամանակ կնոջ արտաքին տեսքից հնարավոր չէ հասկանալ կամ գուշակել նրա սեռական կողմնորոշումը և/կամ նույնասեռ հարաբերությունների փորձառությունը:
- Տրանս կամ ոչ բինար մարդկանց ինքնընկալումները կարող են լինել ամենատարբեր և մարդիկ կարող են օգտագործել տարբեր եզրույթներ իրենց ինքնությունը բնորոշելու համար՝ «տրանս», «տրանսգենդեր», «տրանսսեքսուալ», «տրանսվեստիտ», «տրանս կին» կամ «տրանս տղամարդ», «քվիր» և այլն: Մասնագիտական տեսանկյունից կարևոր է չխառնվել և հարցերի միջոցով դուրս բերել միայն այն տեղեկությունը, որն անհրաժեշտ է բժշկական խորհրդատվությունն իրականացնելու համար:
- Մասնագետը չպետք է փորձի փոխել ԼԲ կանանց սեռական կողմնորոշումը, քանի որ նույնասեռականությունը և երկսեռականությունը (1990 թ. ԱՀԿ պաշտոնապես) չեն հանդիսանում հոգեկան խանգարում, հորմոնային խանգարում, գենետիկական «շեղում», մանկության տարիքում եղած խնդիրների կամ այլ պատճառով առաջացած երևույթ: Դրանք սեռական կողմնորոշման տարատեսակներից են և բազմագործոն են, ինչպես մարդու ցանկացած այլ առանձնահատկություն: Սեռական կողմնորոշման փոփոխման փորձերը միջազգային մասնագիտական հանրույթը չի ճանաչում արդյունավետ, համարում է հակաէթիկական և մարդկանց վնաս հասցնող:
- Մասնագետը չպետք է փորձի փոխել տրանս կամ ոչ բինար մարդկանց գենդերային ինքնությունը, քանի որ վերջինս նույնպես չի հանդիսանում հոգեկան խանգարում (2022 թ. ԱՀԿ պաշտոնապես հաստատված): Տրանս անձինք կարող են դիմել սեռի փոփոխության գործընթացներ անցնելու հետ կապված հարցե-

րով՝ ներառյալ հորմոնային թերապիա, սեռի փոփոխության վիրահատություններ և այլն, որոնք համարվում են տրանս անձանց աջակցության մասնագիտական միջոց: Վերջինիս հետ կապված պետք է հավելյալ հետևել համապատասխան մասնագիտական գրականությանը և ուղեցույցներին:

- ԼԲ կանայք կարող են ունենալ երեխաներ, ցանկություն ունենալ հղիանալու և այդ հարցով դիմել մասնագետին: Իսկ տրանս անձանց վերարտադրողականության պահպանման հարցերը պետք է ներառված լինեն սեռի փոփոխության գործընթացների համատեքստում իրականացվող խորհրդատվության մեջ:
- ԼԲ կանանց դեպքում առավել կարևոր է պահպանել մասնագիտական խորհրդատվության գաղտնիության սկզբունքը, քանի որ երրորդ անձի կողմից կնոջ սեռական կողմնորոշման մասին իմացությունը կարող է հանգեցնել տեղեկության տարածման և խընդիրների առաջացման կնոջ կյանքում: Սա այն հիմնական վախերից է, որ ԼԲ կանայք կարող են ունենալ մասնագետին դիմելիս և թաքցնել իրենց սեռական կողմնորոշումը և/կամ նույնասեռ հարաբերությունների փորձը: Եթե Ձեզ դիմել է ԼԲ կին, ապա կարևոր է չքննարկել կնոջ սեռական կողմնորոշումն այլ անձանց հետ և ներկայությամբ կամ որևէ այլ կերպ ցույց տալ, որ տեղեկություն ունեք կնոջ սեռականության մասին:

Անհրաժեշտ թեժ գծեր՝

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

033 522 533 (հասանելի են իրավաբանական, սոցիալական աջախատողի, հոգեբանական և հավասարը հավասարին խորհրդատվությունները)



ԲԺՇԿԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵԶԴԻԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՆԱՆՑ
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՏՈՒՑԵԼԻՍ



Հայաստանում բնակվող եզդի կանանց շրջանում հաճախակի են խախտումներ արձանագրվում վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների ոլորտում: Եզդի կանանց շրջանում հաճախ են հանդիպում վաղ ամուսնությունները և անչափահաս տարիքի հղիությունները: Շատ հաճախ այդ կանայք չեն տիրապետում իրենց իրավունքներին, նրանք չգիտեն, թե ինչ է հղիությունը և ինչպես պետք է ճիշտ խնամեն իրենց մարմինը, ինչպես պետք է ճիշտ վարեն հղիությունը կամ պաշտպանվեն անցանկալի հղիությունից և սեռավարակներից: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ վաղ ամուսնության և հղիության հետևանքով թե կանանց, և թե նորածինների մոտ առաջ են գալիս ֆիզիոլոգիական լուրջ խնդիրներ:

Եթե Ձեզ դիմել է եզդի կին, ապա շատ կարևոր է, որ.


- Ընդունեք պացիենտին մեկուսի սենյակում, որտեղ Ձեզնից բացի ոչ մեկ չի լինի: Եթե պացիենտին ուղեկցում է աջակցող անձ կամ մասնագետ, խնդրեք, որ նա դրսում սպասի:
- Մի՛ փորձեք անպայման պարզել, թե նա ազգային որևէ փոքրամասնության պատկանում է, թե՛ ոչ. դա որևէ նշանակություն չունի բժշկական ծառայություն մատուցելիս:
- Առողջության և այլ հարցերի քննարկումը մի՛ իրականացրեք կնոջ հարազատների հետ, այլ քննարկեք անմիջապես կնոջ հետ:
- Հնարավորինս ավելի մատչելի ձևով հաղորդակցվեք, խուսափեք բարդ բժշկական եզրույթներից:
- Փորձեք եզդի կնոջ հետ խոսել ժամանակակից հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման կարևորության մասին՝ անցանկալի հղիությունից և սեռավարակներից խուսափելու համար:
- Եթե Ձեզ դիմել է անչափահաս տարիքի հղի կին, ապա անկախ նրանից, թե նա ինչ ազգության է, տեղեկացրեք այդ մասին իրավապահ մարմիններին, քանի որ սա որակվում է որպես սեռական բռնություն:

Ընդունված է համարել, որ եզրի համայնքի կանայք պետք է դեռևս ան-
չափահաս տարիքում ամուսնանան և երեխաներ ունենան, սակայն հարկ
ենք համարում նշել, որ վաղ ամուսնությունները ոչ մի դեպքում չեն կարող
դիտարկվել որպես ազգային ավանդույթ և քրեորեն պատժելի են:

Անհրաժեշտ թեժ գիծ ծառայություններ՝

Սեռական բռնության ճգնաժամային ծառայություն 077 99 12 80





Ձեռնարկը պատրաստվել է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի շահերի պաշտպանության ցանցի անդամների կողմից: